



*Հայ ազիտական
ուսումնասիրություններ 8/2018*

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Նվիրվում է Արցախի պետական համալսարանի
հիմնադրման 50-ամյակին**

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Պրակ 8/2018

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

(сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES

(collection of scientific articles)



Ստեփանակերտ – 2018

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

Հ 246





*Հայ ազիտական
ոԼ ս ո Լ մ ն ա ս ի ռ ո Լ թ յ ո Լ ն ն ե թ 8/2018*



Հ ժ ժ Հ Է Ֆ ä օ ի Հ Ի Հ Ս
Ճ Հ Օ Հ Է շ ծ Հ Ս

Ճ Հ Օ Հ Գ Ղ Հ Ս Է Ս Ճ Ս Ի ծ Ա Հ Ի Հ Ս
օ ի Օ Բ Հ Ի ձ ծ Ա Հ Ս Է
Ս Օ Է ձ ձ Ա Ս Հ Ս



**Արցախում պեդագոգիկական վերակերպման 100-ամյակին
նվիրված գիտաժողովի նյութեր**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ - Արցախի Հանրապետության Ազգային ժողովի
փոխնախագահ, *համանախագահ*

ՎԱԼԵՐԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ - ԱրՊՀ գիտական և միջազգային
համագործակցության գծով պրոռեկտոր,
համանախագահ

ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ – ԱրՊՀ պատմության ֆակուլտետի
դեկանի պաշտոնակատար

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ - ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ
ԼԵՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԱՀ մշակույթի, երիտասարդության
հարցերի և զբոսաշրջության նախարար

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ - ԱրՊՀ-պատմության ամբիոնի ավագ դասախոս

ՎԻԳԵՆ ԹՅՈՒՖԵՆՔՃՅԱՆ - գրականագետ (Կանադա)

ՍՊԱՐՏԱԿ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ – Համազգային հայ կրթական և
մշակութային միության կենտրոնական վարչության
անդամ (Հայաստան)





ՀՏԴ 304(479.25)

Մշակութային կյանք

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Երևանի պետական համալսարան
պ.գ.դ., պրոֆեսոր

**ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ
ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ**

Տոների (և ընդհանրապես ազգային մշակույթի) պահպանման գլխավոր երաշխավորը դարձավ 1918թ. ստեղծված Հայոց Առաջին Հանրապետությունը, որը որպես ազգային պետություն ոչ միայն կարողացավ նպաստավոր պայմաններ ստեղծել ավանդական տոների պահպանման և փարածման համար, այլև ձևավորեց իր պետական տոնական համակարգը՝ հիմնականում կրոնա-ավանդական, ինչպես նաև նոր՝ աշխարհիկ բովանդակությամբ տոների հենքի վրա:

Համազգային զարթոնքի այդ ժամանակահատվածում կենցաղում գերակշռում էին այն տոները, որոնք 19-րդ դ. վերջերին փարածված էին Հայաստանում և հայկական գաղթօջախներում: Առաջին հանրապետության կողմից սահմանված տոնացույցում տեղ էր հատկացվել նաև այլէթնիկ հանրույթներին:

Հայոց տոնացույցի նման կառուցվածքն արդեն իսկ վկայում է նորաստեղծ պետության ժողովրդավարական բնույթի մասին: Այն արտացոլում է ոչ միայն հայության այդ հատվածի էթնիկ ավանդույթները, այլև երկրի էթնոքաղաքական ռեալ իրավիճակը:

Հարկապես կարևորում ենք առանձին տոների ընդհանուր արարողակարգային նկարագրությունները, որոնք արժեքավոր և նույնիսկ եզակի փվյալներ են ոչ միայն հայոց տոնածիսական մշակույթի, այլև պատմա-քաղաքական իրադարձությունների,



Բանալի բաներ. Անկախության փուն, Հայաստան, հանրապետություն, արարողություն, պետական, մշակույթ, կրոն, էթնիկ, ավանդույթ և այդ թվում՝ Արցախի տեսանկյունից:

S. MKRTCHYAN

HOLIDAY SYSTEM OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA AS AN IMPORTANT HISTORICAL-CULTURAL SOURCE

The main guarantor for the preservation the holidays (and national culture in general) was the the first Armenian Republic established in 1918, which, as a nation state, not only managed to create favorable conditions for the preservation and dissemination of traditional holidays, but also formed its state holiday system, mainly on the basis of religious-traditional, as well as new secular holidays.

During that period of the pan-national awakening, the holidays dominated everyday life that were spread in Armenia and in Armenian communities abroad at the end of 19th century. In the holiday calendar set by the First Republic, there was also a place for other ethnic communities.

The structure of the Armenian calendar is already evidence of the democratic nature of the newly-formed state. It reflects not only the ethnic traditions of that part of Armenians, but also the real ethno-political situation in the country.

We especially emphasize the general ceremonial descriptions of individual holidays, which are valuable and even unique information not only of the Armenian celebrity culture, but also historical and political events, including from point of view of Artsakh history and culture.

Keywords : Independence Day, Armenia, Republic, Ceremony, State, Culture, Religion, Ethnic, Tradition.

С. МКРТЧЯН

ПРАЗДНИЧНАЯ СИСТЕМА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК ВАЖНЫЙ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЙ ПЕРВОИСТОЧНИК

Главным гарантом сохранения праздников (и национальной культуры в целом) стала созданная в 1918 году Первая армянская республика, которая как национальное государство смогло не только создать благоприятные



Հայ ազիտակ ան

նյւնւնւնւնւնւնւնւնւնւնւնւնւն 8/2018

условия для сохранения и распространения традиционных праздников, но и сформулировать свою государственную праздничную систему, в основном на базе религиозно-традиционных праздников, а также новых праздников со светским содержанием.

В период общенационального пробуждения в быту преобладали такие праздники, которые в 19-ом веке были распространены в Армении и в армянских колониях. В календаре, установленном Первой республикой, было выделено место также другим этническим сообществам.

Подобная структура армянского календаря уже свидетельствует о демократическом характере новообразованного государства. Она отражает не только этнические традиции армянского народа, но и реальное этнополитическое состояние страны.

Особенно важно отметить общее ритуальное описание отдельных праздников, которые являются ценными и даже исключительными данными не только с точки зрения армянской празднично-ритуальной культуры, но и с позиции историко-политических событий и Арцаха.

Ключевые слова: День Независимости, Армения, республика, церемония, государственный, культура, религия, этнический, традиция.

Տոների (և ընդհանրապես ազգային մշակույթի) պահպանման գլխավոր երաշխավորը դարձավ 1918թ. ստեղծված Հայոց Առաջին Հանրապետությունը, որը որպես ազգային պետություն ոչ միայն կարողացավ նպաստավոր պայմաններ ստեղծել ավանդական տոների պահպանման և տարածման համար, այլև ձևավորեց իր պետական տոնական համակարգը՝ հիմնականում անցյալի կրոնա-ավանդական, ինչպես նաև տոների հիմքի վրա: Արդյունքում, 1919թ. հունվարին¹ «Հայաստանի խորհրդի» կողմից հաստատվեց հետևյալ տոներն ու հիշատակման օրերը՝ Նոր տարի, Քրիստոսի ծնունդ և Մկրտություն, Տեառնընդառաջ, Վարդանանց, Բարեկենդան, Լուսավորչի մուտն ի վիրապ, Զատիկ, Համբարձում, Թարգման-

¹ Օրենք Հայաստանի Հանրապետության մեջ սահմանված տոների մասին. հաստատված է Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 17-ի նիստում, Կառավարության լրաբեր, Երևան, 12 մարտի, 1919, էջ 1-2: Հàêîí î ìðàçàéè-íúð àíçð. Óðàððæàáí Ñîðàðòíí Àðìàééè 1-àí ýíðàððý 1919 à., ՀՊՊԿԱ (այժմ՝Հայաստանի ազգային արխիվ) ֆ. 207, գ. 14, ց. 1, թ. 6:



չաց, Ռուսական մեծ հեղափոխության տոն (մայիսի 12), ՀՀ պատվամենտի բացման օր (օգոստոսի 1), Աշխատավորների օր (մայիսի1):

Ինչպես տեսնում ենք, տոնական համալիրում հիմնականում գերակայում էին հայոց կրոնա-ավանդական տոները (75%): Իսկ ազգային-պետական և միջազգային նշանակություն ունեցող իրադարձությունների հետ կապված տոները¹ կազմում էին տոնացույցի ընդամենը 25%-ը:

Պետությունը սահմանել էր նաև տոնական նպաստների որոշակի համակարգ²:

Առաջին Հանրապետության տոնացույցում տեղ էր հատկացվել նաև այլ էթնիկ հանրույթներին:

Պետության կողմից հատուկ տոներ էին սահմանվել ռուսների համար. այն է՝ Ավետում, Աստվածածնի Վերափոխում, Խաչվերաց, Նիկողայոս Հրաշագործի տոն, Պողոս Առաքյալի և Հովհաննես Մկրտչի [Կարապետի] օրեր, Քրիստոսի ծնունդ և Մկրտություն, Բարեկենդան, Չատիկ, Համբարձում:

Ուշագրավ երևույթ էր նաև Բանակի օրը, որը նշվում էր դեկտեմբերի վերջերին:

Առաջին հանրապետության պետական տոնացույցում (հատկապես՝ հայերի և ռուսների համար նախատեսված մասում) որոշ բացթողումներ կային, որոնք պայմանավորված էին այն հանգամանքով, որ տոնաստեղծ «խորհուրդները» չհասցրեցին մշակել իրականությանը համապատասխանող պետական տոնացույցի վերջնական, հստակ տարբերակը, այլապես Վարդավազը չէր բացակայի ընդհանրապես, իսկ Աստվածածնի, Ս. Կարապետի և Խաչվերաց տոները չէին հայտնվի միայն ռուսների համար նախատեսված հատվածում: Նույն թերացումները կային նաև ռուսների

¹ «Ժողովուրդ», հմ. 24, 22 փետրվարի, Երևան, 1920,; «Ժողովուրդ», հմ.71, 1 մայիսի, Երևան, 1920: Կառավարական հաղորդագրություն Ալեքսանդրապոլի դեպքերի մասին, «Ժողովուրդ», հմ. 79, 15 մայիսի, Երևան, 1920, էջ 1-2,; Մայիսի 1-ը Երևանում, «Ժողովուրդ», հմ. 73, 8 մայիսի, Երևան, 1920, էջ 2: Մայիսի 1-ի տոնակատարությունը Երևանում, «Մաճկալ», (65), 6 մայիսի, Երևան, 1924, Հայաստանի խորհուրդ. Յունար 17-ի նիստը. Տոներ սահմանելու մասին», «Ժողովուրդ», հմ. 14, 5 փետրվարի, Երևան, 1919, էջ 3:

² Օրինակ. «Օրէնք Երկաթուղային ծառայողներին Չարկական փոսի առթիւ մի ամսայ նպաստ փալու համար 12 միլիոն ռուբլի վարկ բանալու մասին. Հաստատուած է Մինիստրների Խորհրդի 1920 թ. մայիսի 13-ի նիստում: Վարկ բանալ հաղորդակցութեան մինիստրութեանը փաստ երկու միլիոն (12.000.000) ռուբլի երկաթուղային ծառայողներին Չարկական փոսի առթիւ նպաստ փալու համար: Մինիստր նախագահ Հ. Օհանջանեան, Գործերի կառավարիչ Գ. Խօջամիրեան» (տե՛ս Կառավարության լրաբեր, № 19, 22 հունիսի, Երևան, 1920, էջ 2):



համար սահմանված տոների բաժնուն, որոնց վերաբերող տոները ևս խմբագրված չէին:

Հայոց անկախ պետությունն առանձին տոների ու հիշատակի օրեր էր սահմանել մահմեդականների համար ևս՝ հաշվի առնելով կենցաղում դրանց տարածվածությունը¹:

Հայոց տոնացույցի նման կառուցվածքն ինքնին վկայում է նորաստեղծ պետության ժողովրդավարական բնույթի մասին: Այն արտացոլում էր ոչ միայն հայոց ազգային և կրոնական ավանդույթները, այլև երկրի էթնոքաղաքական իրավիճակը:

Պետական տոնացույցում ռուսական կրոնական և աշխարհիկ (քաղաքական) տոների առկայությունը պայմանավորված էր ինչպես հանրապետությունում ռուսական էթնիկ զանգվածի գոյությամբ, այնպես էլ Ռուսաստանի հետ քաղաքական, կրոնական, տնտեսական և մշակութային կապերի ավանդույթներով:

Հատկապես կարևորում ենք առանձին տոների ներկայացումը դրանց ընդհանրական կառուցվածքով, որոնք արժեքավոր են ոչ միայն հայոց տոնածիսական մշակույթի, այլև պատմա-քաղաքական իրադարձությունների տեսանկյունից:

Այս առումով հատկապես առանձնանում էր Անկախության տոնը՝ Մայիսի 28-ը², որը, որպես համապետական տոն, նշվում էր բավականին մեծ մասշտաբներով և ուներ համահայկական նշանակություն:

Անկախության տոն - Երևան (1919թ.). «Մայիս 28-ին մայրաքաղաք Երեւանը եռուզեռի մեջ էր: Մայիս 28-ը: Արշալոյսը դեռ չբացուած՝ Էջմիածնայ, Ղամարլուի եւ Կոտայքի կողմերէն դէպի մայրաքաղաք սկսան շարժիլ երկար քարաւաններ: Աստաֆյան փողոցի երկայնքին շարուած էին հայազարմ քաջարի զինուորները: Ապա սկսաւ թափօրը դէպի Քաղաքային Ինքնավարութիւն, մայթերում, պատշգամբներում, տանիքներու վրայ եւ պատուհաններու առջև խոնուած բազմութեանց խելայեղ ծափե-

¹ «Սեպտեմբերի 24-ին անցեալ ուրբաթ օրը Երևանում շիաները հանդիսաւորապէս տօնեցին Մուհարեմի տօնը: Կառաւարութեան թոյլտութեամբ թուրքերը Իմամ Հիսէյնի յիշատակի տօնը կատարեցին սուգի հանդիսաւոր շքերթով, դրօշակներով, զարդարած ձիերով, երաժշտութեամբ: Շքերթը Կոնդից շարժելով անցաւ քաղաքի կենտրոնով դէպ Գեօք Ջամին» (տե՛ս Շիաների հանդիսավոր տոնը, «Ժողովուրդ», հմ.164, 30 սեպտեմբերի, Երևան, 1920, էջ 2):

² **Աղազադյան Վ.** Տարեդարձը Վաղարշապատում, «Ժողովուրդ», հմ. 61, 8 հունիսի, Երևան, 1919, էջ 4: Մայիսի 28-ի տոնակատարությունը, «Ժողովուրդ», հմ. 86, Երևան, 1920,: Հայաստանի անկախության տոնը Վ. Պոլսում, «Ժողովուրդ», հմ. 22, 15 փետրվարի, Երևան, 1920, էջ 2: Մայիսի 28-ի տոնակատարությունը, «Ժողովուրդ», հմ. 85, 26 մայիսի, Երևան, 1920, էջ 3:



Հայ ազիտակ ան

ուկուսվկասիքուքուկներ 8/2018

րուն ու բացականչություններուն տակ: Շատեր ծաղիկներ կը նետէին շքերթին մասնակցողներուն վրայ: Առջեւն կը քալէր նուագախումբը, օդը թնդացնելով զինուորական քայլերգներով եւ «Մեր Հայրենիք»-ի նուագով: Նուագախումբին կը հետեւէր հետեւակ ջոկատ մը, որուն ետեւէն կը քալէր գնդացիրաւորներու խումբը, իսկ ասոր ետեւէն՝ հրետանին եւ ապա հեծելազորը: Զինուորականներէն ետք կու գային դպրոցական աշակերտները, որբանոցներու որբերը՝ որոնցմէ խումբ մը կը կրէր փայտէ հրացան: Աշակերտներու եւ որբերու թելերուն անցուցած էին եռագոյն ժապաւէն: Աշակերտներու և որբերու ետեւէն կը քայլէին Արհեստակցական Միութիւնները, իւրաքանչիւր Միութիւն կրելով իր դրօշը եւ արհեստ բնորոշող գործիք մը: Ասոնցմէ յետոյ կու գային երկու բեռնատար ինքնաշարժներ, որոնց առջեւն կը քալէին խումբ մը պարմանուհիներ՝ ճերմակ հագուատով, իւրաքանչիւրի կուրծքին եռագոյն ժապաւէն, իսկ ձեռքին՝ ծաղկե փունջ մը: Առաջին ինքնաշարժը կը ներկայացնէր Սգաւոր Հայաստանը: Ինքնաշարժին մէջտեղը կէցած էր սեւազգեստ կին մը, երեսը ծածկուած քողով: Կնոջ գլխուն վերեւ կը ծածանէր դրօշակածեւ խոշոր ճերմակ պատառ մը, որու վրայ մակագրուած էին Արեւմտեան Հայաստանի կարեւոր քաղաքներու անունները՝ Վան, Մուշ, Պիթիս, Կարին, Տիգրանակերտ եւն: Սգաւոր Հայաստանի ինքնաշարժին կը հետեւէր Ազատագրուած Հայաստանը ներկայացնող ինքնաշարժը: Կառքին մէջ գեղանի ու սպիտակազգեստ կին մը գլխուն դրած ծաղիկներէ հիսուած պսակ մը եւ ձեռքին բռնած մետաքսեայ եռագոյն դրոշ մը, աջ ձեռքով կողջուններ խանդավառ բազմութիւնը: Անոր ոտքերուն առջև նետուած էր կտոր կտոր եղած շղթայ մը, իսկ շուրջը բոլորուած էին ծաղիկներով զարդարած եւ ճերմակ հագուատներով փոքրիկ աղջիկներ ու մանչեր: Ետեւը կէցած էր յաղթանդամ պահակ զինուոր մը, իսկ աջ ու ձախ կողմերը՝ արեւելահայ եւ արեւմտահայ տարազներով երկու մարդիկ, որոնք կը խորհրդանշէին Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի միացումը: Ազատագրուած Հայաստանը կը ներկայացնէր տաղանդաւոր դերասանուհի Արուս Ոսկանեան: Բազմահազար թափօրը կանգ առաւ քաղաքապետարանի առջեւ: Յատկապէս այս առիթով պատրաստուած պատշգամբի մը վրայ տեղաւորուած էին կառուարութեան անդամները, խորհրդարանի նախագահութիւնը, բանակի հրամանատարական կազմը, օտար պետութեանց ներկայացուցիչներ եւ յատուկ պահակախմբի ուղեկցութեամբ իր հոգեւոր շքախումբով՝ էջմիածնէն եկած Ամենայն Հայոց Գէորգ Ե Կաթողիկոսը, որուն նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստի արարողութիւնը՝ ի յիշատակ հայրենիքի ազատագրման պայքարի ճանապարհին զոհուած հերոսներու: Արտասանուած ճառերէն ետք սկսաւ զինուորական տողանցքը:

Կառավարութեան նախագահ Խատիսեանին վիճակուեցաւ կատարել Միացեալ Հայաստանի յայտարարութիւնը.-«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովուրդի լիակատար ազատութիւնը ու բարգա-



աճումը ապահովելու համար, Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկության, յայտարարում է թե՛ այսօրուանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետական միություն»¹:

Անկախության տոն - Երևան (1920թ.). «Կառուարական յանձնախումբը պատրաստություններ է տեսնում հանդիսաւորապէս տօնելու Մայիսի 28-ի անկախութեան տարեդարձը: Այդ օրը Հայաստանի բոլոր վայրերում կլինեն տօնական հանդէսներ: Երևանում կլինի զօրահանդէս կաթօղիկոսի ներկայութեամբ, անկախութեան հանդիսաւօր նիստ պառլամենտի նոր շինութեան մէջ, ուր հանդէս կգան պետութիւնների և կուսակցութիւնների ներկայացուցիչները:

Փողոցները զարդարած կը լինի ամբողջ օրը: Երեկոյեան կը լինի հրավառութիւն, իսկ Պառլամենտի շէնքում շքեղ երեկոյթ և բալետ»²:

Անկախության տոն - Վաղարշապատ (1919թ.). «Սրանից 3 օր առաջ մունետիկը Վաղարշապատի փողոցներում յայտարարեց, որ փողոցները և դռների առջևը մաքրեն ու ջրեն 28-ի Հայաստանի ազատութեան տոնի համար: Այդ հրամանը կատարեց, որովհետեւ բոլորի սրտին մտիկ է այդ տօնը:

Առաւօտուանից ոտի վերայ էր ամբողջ Վաղարշապատը, իւրաքանչիւրը աշխատում էր իւր պատշգամբը, լուսամուտը և տան մուտքը զարդարել գեղեցիկ կերպով, քան միւսը, գորգերով, կանաչ թարմ ոստերով, մայիսեան գեղեցիկ վարդերով ու ծաղիկներով, և այսպէս բարի նախանձը մէկը միւսին գերազանցում էր և փողոցին գեղեցիկ տեսք ու հրապուրիչ փայլ տալիս: Ծաղիկների բուրմունքը խառնուել էր մարդկանց ազատութեան շնորհաւորանքների հետ: Ծինուած էին 3 հատ յաղթական կամարներ թարմ ոստերից ու ծաղիկներից, որոնց վրայ ծածանում էին կարմիր դրօշակներ: Մէկը շինուած էր Վաղարշապատի հրապարակում, միւսը՝ Իգդիր տանող ճանապարհի խճուղու վրայ, երրորդը՝ գաւառական կոմիսարիատի մօտ: Դորանց վերայ գրուած էր «Կեցցէ Հայաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնը, կեցցէ ազատագրական ժողովուրդը և կեցցէ միացեալ անկախ Հայաստանը»:

Ժամ 10-ին սկսուեց պատարագը՝ պատարագիչն էր Գէորգ եպիսկոպոս Չորեքեանը: Պատարագից յետոյ իջման սեղանի առաջ կատարեց հոգեհանգիստ հայ զինուորների և պատերազմում ընկած հայերի համար, որոնք զոհուել են այդ 5 տարւա մեծ պատերազմի ժամանակ: Պատարագից յետոյ հոգևոր դասը «Այսօր երկնայինքն ուրախացան» շա-

¹ **Տույան Ա.**, Սարդարապատյան խոյանք և մայիսյան տոնակատարություն, «Դրո-«Դրոշակ», 18 հունվարի, 1989, էջ 12:

² Մայիսի 28-ի տոնակատարությունը, «Ժողովուրդ», 26 մայիսի, Երևան, 1920, էջ 3:



Հայ ազի տակ ան

Ուսումնական հոդվածներ 8/2018

րականը երգելով և զանգակների գնդեցիկ հնչունի տակ դուրս եկան Տաճարից և իրաքանչիւրը տեղ բռնեց զանգակատան առաջ, որտեղ և կատարուեց առաջին անգամ ազատ Հայաստանի հանրապետութեան համար մաղթանք: 600 տարի յետոյ կրկին Մայր Տաճարի կամարների տակ հնչեց Հայաստանի ազատագրման համար մաղթանք: Պատարագիչ Գէորգ եպիսկոպոսը մի զգացում ընթաց խօսեց օրայ առթիւ և համեմատեց Փրկչի վերջին շաբաթի, Աւագ շաբաթի չարչարանքների հետ, որ իրեն մահով փրկութիւն և կեանք տուեց ընդհանուր մարդկութեան և կուի յաղթանակը եղաւ Քրիստոնէութեան տարածելը: Այդ տեղից զանազան խայտաբղէտ տարազով հասարակութիւնն անցաւ Վաղարշապատի հրապարակը, որտեղ եղաւ զինուորական զօրահանդէս (պարատ): Ապա կամարի տակ պատրաստուած սեղանի վերայից խօսեցին գաւառից և տեղի հաստատութիւններից եկած պատգամաւորները. 1. Վ. Տէր-Խաչատրեան-«կազմակերպիչ», 2. Վահագն Շահազիզեան-Աշտարակի շրջանի հայ հասարակութեան կողմից, 3. Հայ ժողովրդական կուսակցութեան և տեղիս բարեգործական ընկերութեան կողմից - Մինաս Մանուէլեանը, 4. Ամերիկական և Էջմիածնի կոմիտէի կողմից-Միհրան Սերճանեան, 5. Երուանդ Հայրապետեան, 6. Թուրքահայերի կոմիտէի կողմից-Դանիէլ Վարդապետ: Այդտեղ մերթ ընդ մերթ երգեցին պ. Դևեանի երկսես խումբը. «Մեր հայրենիք» և ուրիշ երգեր: Ապա թափորը տեղական զուռնայի առաջնորդութեամբ շարուեց և կանգ առաւ տեղիս դաշնակցութեան տան առաջ, որի պատշգամբից խօսեցին. 1. Յովսէփ Գրիգորեան, 2. Գառնիկ Քեալաշեան:

Կրկին նուագեց զուռնան և թափորը շարունակեց դէպի Իգդիր տանող ճանապարհի կամարը, որտեղ կառքի վերայից խօսեցին. 1) Սմբատ Կարօյեան, 2) Աւօեան (Վաղարշապատի կուլտուրական աշակերտութեան կողմից): Թափորը զուռնայի հետ շարժուեց դէպի գաւառական կօմիսարիատի մոտ եղած կամարը, որտեղ պատշգամբից խօսեցին՝ 1) Հայկ Աճեմեան, 2) Սիմէօն Ճուղուրեան, 3) Գրիգոր Բորոզեան, 4) Յովհաննէս, 5) Սիմէօն Գեարաքեան, 6) Գառնիբասարի կողմից թուրք Ալեաքսար Մուլա Յուսէփն օղլին: Գառնիկ Քեալաշեան թուրքերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեց գաւառից եկած թուրք պատգամաւորներից և նրանց հրաւեր կարդաց միացած ոյժով գործել հայրենիքի համար: Երիտասարդ տաճկահայ Հայկ Աճեմեանը աչքի ընկաւ իւր անկեղծ, սրտառուչ արտահայտուած ճառով ու մտքերով: Երեկոյեան ճեմարանի հիւանդանոցում երեկոյթ կար, իսկ բակում հրաւառութիւն»¹:

¹ **Աղազադյան Վ.**, *Տարեդարձը Վաղարշապատում, Ժողովուրդ, հմ. 61, 8 հունիսի, Երևան, 1919 էջ 4:*



Անկախութեան տուն - Կ. Պոլսի Սպաներու (1920թ.). «Հայաստանի անկախութեան ճանաչման լուրը մեծ խանդավառութիւն է առաջ բերել թուրքական մայրաքաղաքի հայկական բոլոր շրջաններում:

Այդ օրերը Կ. Պոլսի հայերի համար տօնական կերպարանք էին առել: Այդ նշանաւոր պատմական դէպքի առթիւ Կ. Պոլսի հայկական դրամատիկական ընկերութիւնը շքեղ երեկոյթ էր կազմակերպել, որին ներկա են եղել պատրիարք Զաւէն սրբազանը, Մեսրոպ եպիսկոպոս Նարոյեանը և հայկական հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Թահթաճեանը:

Թուրքական պետութեան ներկայացուցիչներն այցելել են պատրիարքին և շնորհաւորել Հայաստանի քաղաքական վերածնութիւնը:

Նույնիսկ ուրախութիւն են յայտնել թիւրք լրագրողները, իհարկէ միայն այն մտքով, որ հայերը կբաւականանան միմիայն կովկասեան Հայաստանով և Սև ծովի ափին մի նաւահանգիստ պահանջելով»¹:

Անկախութեան տուն - Նոր Բայազետ (1920թ.). «Ժամը 10-ից Դումայի դուռը հաւաքեց մեծ բազմութիւն դրօշակներով և պլակատներով: Այդ տեղից հանդիսաւոր թափօրը դափ ու զուռնայի ուղեկցութեամբ շարժեց դէպի ուսումնարանի շէնքը, ուր տեղաւորված էր զօրքը: Դպրոցի հրապարակում տեղ բռնեցին զօրքը, հասարակական, արհեստակցական, աշակերտական միութիւնները, ամերիկեան որբերը և այլն՝ իրանց ազգային և ինքնուրոյն դրօշակներով:

Հոգևորական դասը ժամերգութիւնից յետոյ մաղթանք կատարեց: Մաղթանքից յետոյ գործակալ Թադէոս Վարդապետը կարդաց Հայրապետական կոնդակը: Կաթողիկոսի կոնդակը մեծ ազդեցութիւն գործեց ժողովրդի վրայ, շատերի աչքերից արտասունք էին հոսում: Օրայ պատշաճի ճառեր արտասանեցին գեներալ Խանքալամեան, քաղաքագլուխ Վ. Աֆրիկեան, Յ. Թարլօյեան և այլք: Բոլոր ճառերը ուղեկցվում էին որոտընդոստ կեցցէներով և երաժշտական օրկեստրը նւագում էր ազգային հիմնը, իսկ արտիլերիան այդ ժամին երեք անգամ թնդանոթից արձակեց:

Ապա տեղի ունեցաւ զօրքերի շքերթ, բոլոր վաշտերին մէկիկ-մէկիկ բարևեց գեներալ Փիրումեանը: Քաղաքագլուխ Աֆրիկեանը շնորհաւորական խօսք արտասանեց ամերիկեան հասարակութեան և վարիչների հասցեին:

Ժողովրդի մի մասը գոհ և ուրախ տպաւորութեան տակ ցրեց իրեանց տները, իսկ մի մասը ուղեկցեց զօրքին դէպի քաղաքի հարաւային կողմը մի կանաչ մարգագետին, ուր քաղաքի կողմից զօրքի համար ճաշ էր պատրաստուած: Ճաշին մասնակցեցին նաև քաղաքացիներ, որոնց

¹ Հայաստանի անկախութեան տունը Կ. Պոլսում, Ժողովուրդ, հմ. 22, 15 փետրվարի, Երևան, 1920, էջ 2:



շրջանում հանգանակություն էր բացված յանկապէն զօրքի պատին ճաշ տալու համար: Ժամը 3-ին հանդեսը վերջացավ»¹:

Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ. «Կիրակի յունարի 25-ին երեկոյեան ժամը 9-ին քաղաքային ինքնավարութեան շէնքում մինիստր նախագահ պ. Խատիսեանի հրաւերով տեղի ունեցաւ շքեղ բանկետ - ճաշկերոյթ Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ: Ներկայ էին պառլամենտի նախագահութիւնը, անդամները, կառավարութեան ամբողջ կազմը: Դիպլոմատիկական ներկայացուցիչներ՝ Անգլիայի, Ամերիկայի կամաւորական բանակի, Պարսկաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական կառավարութիւնների ներկայացուցիչներ: Բանկետը անցաւ շատ ուրախ և բարձր տրամադրութեան տակ: Ծաշկերոյթը վերջացաւ ժամը 11 և կէսին և հիւրերը շտապեցին պարլամենտի դահլիճը, ուր այդ գիշեր տեղի ունէր «Տատիանայի օրւան» տօնակատարութիւնը»²:

Բավականին արժեքավոր են նաև Վարդանանց, Բանակի և Աշխատավորների տոների կապակցությամբ կազմակերպված միջոցառումները:

Վարդանանց տոն - Երևան (1920թ.). «Հինգշաբթի Վարդանանց տօնի առթիւ Ս. Պողոս Պետրոս եկեղեցու առջև կատարուեց մեծ զօրահանդէս: Ժամը 11-ին Երևանի զինւորական մի գումարտակ և արտիլերիան մուգիկի առաջնորդութեամբ բարձրացան Աստաֆեան փողոցով և շարուեցին եկեղեցու առջև: Քիչ յետոյ եկան զինւորական նախարար և գեներալ Նազարբէկեանը, այնուհետև եկան վարչապետ Ս. Խատիսեանը, խնամատարութեան մինիստրը, պառլամենտի անդամներ և ուրիշ պետական բարձրաստիճան անձնավորութիւններ: Մինիստր նախագահը դիմեց զինւորներին հետևեալ ճառով. «Թէև մենք դեռ չենք ստացել այն բոլոր հողամասերը, որոնք մեր հայրենիքի անբաժան մասն են կազմում, սակայն ես վստահ եմ, որ շուտով հայկական բանակը կը մտնի Տաճկահայաստան և կը գրավէ մինչև Սւազն ու Տրապիզոնը: Մենք չենք կարող հանգիստ լինել, քանի որ մեր տաճկահայ եղբայրները սպասում են անհամբեր երկիր գնալու: Մենք չենք կարող անտարբեր լինել, երբ այսօր ստացւած վերջին տեղեկութիւնների համաձայն Ադրբեջանեան 1000-ից անէլի զինւորներ տաճկական գեներալների և փաշաների առաջնորդութեամբ պատրաստուում են Շուշիից յարձակւիլ Զանգեզուրի վրայ և ուզում են կտրել վերջնականապէս Ղարաբաղն ու Զանգեզուրը մեզանից: Հայ զինւորները երբեք թոյլ չափտի տան այդ բանը և վստահ եմ, որ դուք հերոսաբար կը կռուէք Ադրբեջանի այդ քայլի դէմ: Վերջում նա կէցցէներով մի քանի անգամ

¹ **Սինանյան Գ.** *Անկախության տոնը Նոր Բայազետում, «Ժողովուրդ», հմ. 92, 10 հունիսի, Երևան, 1920, էջ 3-4:*

² *Բանկետ Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ, «Ժողովուրդ», հմ. 13, 29 յունարի, Երևան, 1920, էջ 3:*



ողջունեց հայ բանակը, սպայութիւնը, հայ ժողովուրդը և Միացեալ ու Անկախ Հայաստանը: Հետոյ կատարվեց զօրանցք և հանդէսը վերջացաւ»¹:

Վարդանանց տոն - Մարգարա (1920թ.). «Ամսոյս 19-ին հինգշաբթի երեկոյեան Վարդանի յիշատակը յավերժացնելու համար պ. Բաղդասարեանի շէնքում տեղի ունեցաւ հանդէս: Եղան մենախօսութիւններ Վարդանի մահի և մէջ ընդ մէջ երգում էին դպրոցի աշակերտների խումբը ղեկավարութեամբ դասատու տ. Մանե Սաղոյեանի:

Վերջում տեղի ունեցան պարեր, որի ժամանակ նվագում էր տեղային զուռնան:

Հասարակութիւնը մեծ բաւականութիւն ստացաւ և շատ լաւ տպաւորութեան տակ հեռացաւ հանդեսից»²:

Բանակի օր - Երևան (1919թ.). «Երեւանում դեկտեմբերի 19, 20 և 21-ին Բանակի օրերը կտօնեն հետևեալ կարգով.

Ուրբաթ դեկտեմբ. 19-ին կը կատարւի հանգանակութիւն իրերով: Քաղաքի փողոցներում կը շրջէն հատուկ հաւաքող սայլեր: Հրաւիրում ենք քաղաքացիներին իրենց նվերները հանձնել սայլերը ուղեկցող լիազօրներին:

Շաբաթ դեկտ. 20-ին ցերեկով կը վաճառուին տօնին պատշաճ օրանիշները: Երեկոյեան պարլամենտի դահլիճում կը կայանայ շքեղ երեկոյթ, որ կազմակերպում են կանայք:

Կիրակի դեկտեմբերի 21-ին ցերեկով կը կայանայ զորահանդէս և հրապարակաւ ժողովներ, կը վաճառուեն «Բանակի օր» թերթը և նշաններ:

Երեկոյեան կը կայանայ Հայաստանի գրական ընկերութեան դասախօսութիւնը պարլամենտի դահլիճում:

Քաղաքացիներ, «Բանակի օրին» զարդարեցէ՛ք քաղաքը դրօշակներով ու գորգերով: Սրտով միացէ՛ք մեր քաջարի զօրքի հետ և առատաձեռն նվերներով յաջողութեամբ պսակեցէ՛ք տօնը: Կեցցէ բանակն ու ժողովուրդը»:

*Պարլամենտի նախագահութիւն և տօնական օժանդակ մարմին»*³:

Մայիսի 1 (1920թ.). «Ներքին գործերի մինիստրի հրահանգի, կառավարութեան որոշման համաձայն, ներքին գործոց պ. մինիստրը

¹ Վարդանանց տոնի կատարումը, «Ժողովուրդ», հմ. 24, 22 փետրվարի, Երևան, 1920, էջ 3:

² **Չիլինգարյան Վ.** Վարդանանց տոնը Մարգարայում, «Ժողովուրդ», Երևան, 6 մարտի, 1920:

³ «Ժողովուրդ», հմ. 152, 19 դեկտ., Երևան, 1919, էջ 3: «Ժողովուրդ», հմ. 154, 24 դեկտ., Երևան, 1919, էջ 2: «Ժողովուրդ», հմ. 153, 20 դեկտ., Երևան, 1919, էջ 2: «Ժողովուրդ», հմ. 147, 11 դեկտ., 1919, էջ 1:



յայտնել է բոլոր տեղական արհմիութենաների հիմնարկություններին տօնել հանդիսատեսային մայիսի մէկը:

Տեղական վարչությունների պարտքն է քաղաքներում և գիւղերում ակտիվ մասնակցություն ցույց տալ բանտրական այդ մէծ տօնի օրը:

Միլիցիան պիտի քաղաքները զարդարել տայ: Ներքին գործոց պ. մինիստրը շնորհատրում է կառուարութեան կողմից մայիսի մէկի տօնը և յայտնում է կառուարութեան ջերմ վերաբերմունքը բանտրութեան և գիւղացիութեան¹:

Մայիսի 1 - Երևան (1920թ.). «Մայիսի 1-ը տօնեց Երեւանում արտակարգ պայմաններում: Վաղ առաւօտից բանտրական կազմակերպությունները իրենց դրօշակներով դուրս եկան փողոց, աչքի էր ընկնում կոմունիստների եռանդուն և բացարձակ գործունէութիւնը: Նրանք պետական երկու աստօմբիլների վրայ փակցրել էին «կեցցէ Ռուսաստանի կոմունիստական կուսակցութիւնը» և բազմաթիւ դրօշակներով և պլակատներով երաժշտախմբերի ուղեկցութեամբ պտտում էին փողոցները: Պարլամենտի առաջ տեղի ունեցաւ մեծ միտինգ, ուր հանդէս եկան կուսակցական ներկայացուցիչները ուլտրա-սօցիալիստական ճառերով: Բոլշևիկները շատ տեղերում գոռում էին «կորչի ներկայ կառուարութիւնը», «կեցցէ Խորհրդային Ռուսաստանը»:

Խօսեց նաև Վրաստանի հիմնադիր ժողովի անդամ Իսիդոր Թամիշվիլին:

Երեկոյեան պարլամենտի սրահում տեղի ունեցաւ միտինգ, ուր հանդէս եկան բազմաթիւ հոետորներ:

Պիտի ասել, որ բոլոր իրադարձութիւններից յետոյ և ներկայ քաղաքական մօմենտում մայիսի 1-ը Հայաստանում կամ չպիտի տօնել, կամ եթէ տօնոււմ էր՝ ոչ այդպիսի ձևով: Որովհետեւ այդ օրը շնորհիւ դաշնակցականների անհեռատեսութեան, թոյլատրում էին բոլշևիկներին բազմաթիւ հակապետական քայլեր, և փաստօրէն մայիսի 1-ը դարձաւ, ինչպէս պէտք էր սպասել, կոմունիստների ագիտացիայի օր: Ահա թէ ինչու Հայ ժողովրդական կուսակցութիւնը չմասնակցեց այդ օրւայ տօնակատարութեանը»²:

Մայիսի 1 - Ալեքսանդրապոլ (1920թ.) - «Ադրբէջանի յեղաշրջումից յետոյ բոլշևիկների անդրկովկասեան կոմիտեն որոշել է յեղաշրջում առաջ բերել նաև Վրաստանում ու Հայաստանում: Այդ նպատակով դրսից Հայաստան են եկել գործակալներ խոշոր գումարներով: Մայիսի մէկը նրանք նշանակել են իրենց դիտարարութիւնն իրագործելու օր, բայց Հայաստանի կազմակերպած աշխատարարութեան և կառուարութեան ձեռք առած միջոցներով՝ նրանց ծրագիրը վիժեց: Միայն Ալեքսանդրապոլում մի խումբ

¹ «Ժողովուրդ», հմ. 71, 1 մայիսի Երևան, 1920:

² Մայիսի 1-ը Երեւանում, «Ժողովուրդ», հմ. 73, 8 մայիսի, Երևան, 1920, էջ 2:



3 այ ա գ ի տ ա կ ա ն

ՊԼԱՆԻՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՆԿՆԵՐ 8/2018

ստահակներ հակապետական ցույցեր են արել և կանոնը են բանտի վրայ
յարձակվիլ, բայց յաջողութիւն չեն ունեցել: Նոյն մայիսի մէկին
Հայաստանի կառաւարութիւնն ստանում է Ադրբէջանի «կարմիր» կառա-
ւարութիւնից գռեհիկ վերջնագիր, որով պահանջւում էր երեք օրայ ըն-
թացքում պարպել Ղարաբաղն ու Ջանգեզուրը: Ադրբէջանական զորքերը
մտադիր էին միանալ Մուստաֆա փաշա Քէմալի զօրքերի հետ»¹:

¹ Կառաւարական հաղորդագրութիւն Ալեքսանդրապօլի դեպքերի մասին, «Ժողո-
վորդ», հմ. 79, 15 մայիսի, Երևան, 1920, էջ 1-2:



Հայ ազիտակ ան
ոլ սոլ մնասիրոլ թյ ոլ ններ 8/2018

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(գիտական հոդվածների ժողովածու)

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
(сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES
(collection of scientific articles)

Տեխնիկական խմբագիր՝ Ռ.Հովսեփյան

8/2018



Հանձնված է տպագրության՝ 11.03.2019 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 05.04.2019 թ.:
Ծավալը 8 տպ. մամուլ: Տպաքանակ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական Հրատարակումներ – Գիտական տեղեկագիր

Основатель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,
website: www.asu.am – Scientific publications – Proceedings.

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Tumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



Հայ ազիտակ ան
ոլ սոլ մնասիրոլ թյ ոլ ններ 8/2018